

«Արդշինբանկ» ԲԲԸ

Կենսակայունության հաշվետվություն 2024





Բովանդակություն

Կենսակայունության ընդհանուր տեսլական	3
Կառավարում	8
Ռազմավարություն	12
Ռիսկերի կառավարում	15
Չափանիշներ և թիրախներ	21
Հեռանկարներ և հետագա առաջնահերթություններ	26



Ardshinbank

Կենսակալությունության ընդհանուր տեսլական





Կենսակայունության ընդհանուր տեսլական

«Արդշինբանկ»-ը հայաստանյան ֆինանսական համակարգի բոլոր կարևորագույն շերտերում, այդ թվում՝ մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ բանկային ոլորտներում գործող ունիվերսալ բանկ է:

Որպես Հայաստանի ամենամեծ բանկ՝ «Արդշինբանկ»-ը մեծապես նպաստում է ազգային ֆինանսական համակարգի կայունությանն ու զարգացմանը:

Բանկը՝

- տրամադրում է ֆինանսավորում տնտեսության ռազմավարական կարևորություն ունեցող ոլորտներում,
- օժանդակում է ենթակառուցվածքային և էներգետիկ նախագծերին,
- համագործակցում է միջազգային ֆինանսական կառույցների հետ՝ կենսակայունությանն ու զարգացմանը միտված ֆինանսավորումը հայկական շուկա ուղղորդելու համար,
- ստանձնում է համաշխարհային կապիտալը և տեղական տնտեսական աճը միմյանց կապող գլխավոր միջնորդ օղակի դերը:

Կենսակայունության չափանիշների ինտեգրումը «Արդշինբանկ»-ի կառավարման և վարկավորման գործունեության մեջ ունի համակարգային կարևորություն, որը բուն Բանկի շրջանակներից դուրս է: Կլիմայի փոփոխությունը, անցումային ռիսկերը և շահագրգիռ անձանց աճող ակնկալիքները աստիճանաբար ավելի են ձևավորում Հայաստանի ֆինանսական ոլորտի գործող միջավայրը: «Արդշինբանկ»-ը, որպես առաջատար կառույց, ընդունում է այս զարգացումները կազմակերպված, թափանցիկ և ապագային միտված պրոակտիվ կառավարելու իր պատասխանատվությունը:

Կայունությունը Բանկի ռազմավարական և ռիսկերի կառավարման երկարաժամկետ շրջանակի անբաժանելի բաղադրիչ է:

Բնապահպանական

Բանկի բնապահպանական նպատակների հիմնական խնդիրն է.

- գործառնությունների և ֆինանսավորված պորտֆելների էկոլոգիական ազդեցության նվազեցումը,
- կլիմայական ռիսկի կառավարման ուժեղացումը,
- կենսակայուն ֆինանսավորման խթանումը,
- կլիմային առնչվող քանակական թիրախների և անցումային պլանի մշակումը,
- CO₂-ի արտանետումների գործառնական և ֆինանսավորված հաշվարկման և դիտանցման համար ավտոմատացված համակարգերի ներդրումը,
- վարկային ռիսկի գնահատման գործընթացներում կլիմայական ռիսկի բաղադրիչների ներառումը,
- կորպորատիվ վարկավորման պորտֆելի շրջանակում բնապահպանական և սոցիալական E&S) ռիսկերի դասակարգման բարելավումը,
- ֆինանսավորվող արտանետումների չափման և բացահայտման համար Ածխածնի արտանետումների հաշվառման ֆինանսական համագործակցությամբ (PCAF) ստանձնած հանձնառությունների կատարումը:

Գործողությունների նպատակն է կառուցել հստակ կատուցվածքով և տվյալներով ղեկավարվող կլիմայական ռիսկի կառավարման շրջանակ:



Հայաստանյան տնտեսությունը շարունակում է փոխակերպվող տնտեսական դաշտում խոցելի մնալ ֆիզիկական և անցումային ռիսկերի հետ կապված զարգացումների, այդ թվում զարգացող կանոնակարգիչ չափորոշիչների, էներգիայի շուկայում տեղաշարժերի և փոփոխվող ֆինանսավորման պայմանների հանդեպ:

Բանկը կենսակայունությունը դիտում է որպես փոխակերպվող տնտեսական դաշտում կապիտալի պատասխանատու բաշխման, ռիսկերի մեղացման և ռազմավարական դիրքավորման շրջանակ:

Սոցիալական

Սոցիալական հիմնասյուների առաջնահերթությունները.

- ներառական և անվտանգ աշխատանքային պայմաններ,
- հավասար հնարավորությունների և բազմազանության սկզբունքներ,
- բարելավված հասանելիություն հաշմանդամություն ունեցող հաճախորդների համար,
- աշխատակիցների ներգրավման և Բնապահպանական և սոցիալական կառավարման (ԲՍԿ) իրազեկվածության ամրապնդում,
- բնապահպանական և սոցիալական հարցերով բողոքների ներկայացման մեխանիզմների շարունակական բարելավում,
- աշխատակիցների առավելությունների և աշխատանք-կյանք բալանսի քաղաքականության կատարելագործում:

Բանկը հասկանում է, որ մարդկային կապիտալը, շահագրգիռ կողմերի վստահությունը և հաճախորդների հետ պատասխանատու աշխատանքը կայուն արժեքների ստեղծման էական բաղադրիչներ են:

Կառավարում

Կառավարման հիմնասյան շեշտադրումներն են.

- թափանցիկ և հաշվետվողական կորպորատիվ կառավարումը,
- բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) սկզբունքների ինտեգրումը,
- կենսակայունության հաշվետվության ներկայացումը յուրաքանչյուր տարի՝ 2024–2025 հաշվետու ժամանակահատվածից սկսած,
- վարկավորման չափանիշների մշակումը,
- կենսակայունության չափանիշների հիման վրա ՓՄՁ-ների և կորպորատիվ ակտիվների դասակարգումը ըստ ռիսկերի հանդեպ զգայունության աստիճանի,
- կենսակայուն ֆինանսական կարողությունները բարելավելու նպատակով միջազգային կառույցների հետ համագործակցությունը,
- աշխատակիցների վարձատրման համակարգում կենսակայունությանն առնչվող Հիմնական կատարողական ցուցանիշների (KPI) ինտեգրումը,
- ազդարարման և համապատասխանության մեխանիզմների ամրապնդումը:

Այս միջոցառումների օգնությամբ Բանկը ձգտում է կենսակայունություն ներդնել իր ներքին հսկողության և վերահսկման կառուցվածքային համակարգում: 2024թ.-ին «Արդշինբանկ»-ում կենսակայունացումը կառուցակարգելու իմաստով հիմնաքարային փուլ էր:

2024թ.-ի ընթացքում Բանկը՝

- որպես հետագա դիտանցման հիմք հաշվարկել է ջերմոցային գազերի գործառնական և ֆինանսավորվող արտանետումները,



Վարքագծի կանոններ և գործարար էթիկա

- Բանկի Վարքագծի կանոններով սահմանվում են բոլոր աշխատակիցներից ակնկալվող էթիկայի սկզբունքները և պրոֆեսիոնալ վարքագիծը: Դրանք խթանում են հաճախորդների, գործընկերների և բոլոր կոլեգաների հետ գործարար ամենատարբեր գործունեության և շփումների մեջ ազնվությունը, թափանցիկությունը և պատասխանատու որոշումների կայացումը,
- Կանոններով ամրապնդվում է հավասար վարվեցողության, մարդու իրավունքների հանդեպ հարգանքի և խտրականության բացառման մոտեցումը ամրագրող բանկի հանձնառությունը, Դրանցով սահմանվում են նաև պրոֆեսիոնալ վարքագծի, գաղտնիության և պատասխանատու հաղորդակցման ուղեցույցներ՝ աջակցելով վստահության միջավայրին, հաշվետվողականությանը և հաճախորդակենտրոն սպասարկմանը,
- Վարքագծի կանոնների միջոցով Բանկն ամրապնդում է իր ներքին կառավարման շրջանակը և խթանում է ամենօրյա գործառնություններում էթիկայի սկզբունքների ներառումը:

Կենսակայունության նախաձեռնություններ

Բանկը հանձնառու է կենսակայանությունը դարձնել իր հիմնական գործառնությունների մաս և խրախուսել բնապահպանական պատասխանատվությունը:

Իր ԲՄԿ ռազմավարությանը համահունչ՝ Բանկը ակտիվորեն իրականացնում է ածխածնային արտանետումները կրճատելու, ռեսուրսների արդյունավետությունը խթանելու և կլիմայի փոփոխության մեղմացմանը աջակցելու նախաձեռնություններ:

Հետևյալ նախաձեռնությունները ընդգծում են չափելի բնապահպանական ազդեցություն ստեղծելու «Արդշինբանկ»-ի հանձնառությունը՝ գործառնությունների ընթացքում ավելի ընդարձակ համայնքի շրջանում կայուն գործելակերպեր ներդնելուն զուգընթաց:

- Խորհրդի կողմից հաստատվել է Կլիմայի գործողությունների պլանը,
 - տեխնիկական աջակցության ծրագրերի համաձայն իրականացրել է պորտֆելային մակարդակի կլիմայի զգայունության վերլուծություն,
 - կորպորատիվ վարկավորման շրջանակում սահմանել է իր բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման գործելակերպերը,
 - թափանցիկությունը բարելավելու նպատակով իր պաշտոնական կայքում ստեղծել է կենսակայունության հարցերով հատուկ բաժին,
 - համապատասխան հարցերով պատասխանատու աշխատակիցներին ներկայացրել է Համապատասխանության թիմի հետ ունեցած կենսակայունության նպատակները,
 - շարունակել է տվյալների որակի բարելավման և մշտադիտարկման նպատակով ներքին համակարգերի կատարելագործումը:
- Այս անկյունաքարային իրադարձությունները նշանավորում են քաղաքականության ձևակերպումից անցում դեպի կառուցվածքաին իրականացում և բացահայտում:



Անտառների վերականգնում «Իմ անտառ Հայաստան»-ի հետ

Բանկը, համագործակցելով «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ի հետ, ֆինասավորել է Լոռու մարզի Լեռնաջուր գյուղում ավելի քան 6 հեկտար մակերեսով անտառի տնկումը:

Տնկման աշխատանքներն ավարտվել են նոյեմբերի վերջին՝ ծառերի երեք էնդեմիկ տեսակների, այդ թվում՝ կաղնու, բոխենու, վայրի տանձենու, վայրի խնձորենու և հաճարենու օգտագործմամբ: Մինչ այդ «Արդշինբանկ»-ի՝ շուրջ 150 աշխատակից Գեղարքունիքի մարզում հավաքել էին 108կգ կաղին՝ նպատակ ունենալով գալիք տարի աճեցնել շուրջ 12,000 տնկի:

Նախաձեռնությունը երկարաժամկետ է՝ ավելի քան 30 տարի տևողությամբ: Բանկի կողմից պաշտպանվող անտառը ակնկալվում է, որ տարեկան կկլանի CO₂ գազի 2,000 տոննա արտանետում:

«Արդշինբանկ»-ը շեշտում է, որ տնկված յուրաքանչյուր ծառ նպաստում է կլիմայի փոփոխության մեղմացմանը, կենսաբազմազանությանը և ավելի կայուն ապագային:



Վերականգնվող էներգիա

«Արդշինբանկ»-ն իր շենքերից 20-ի տանիքներին տեղադրել է արևային վահանակներ՝ նպաստելով վերականգնվող մաքուր էներգիայի արտադրմանը: Այս նախաձեռնության շնորհիվ տարեկան շուրջ 20%-ով կրճատվել է էներգիայի ավանդական աղբյուրների սպառումը, ինչը հանգեցրել է բանկային կառուցվածքային գործառնությունների զգալի բարելավմանը և Բանկի CO₂ արտանետումների կրճատմանը:

Ծրագիրը նպաստում է Բանկի ավելի ընդարձակ կլիմայական ռազմավարությանը՝ նվազեցնելով ածխածնի արտանետման հետևանքով առաջացող գործառնական ռիսկերը:



Թափոնների կառավարում

2024թ. Բանկը սկսեց իր գրասենյակներում թափոնների տեսակավորման և վերամշակման ծրագրի ներդրման աշխատանքներ:

Ծրագրի նպատակն է բարելավել ռեսուրսների արդյունավետությունը, աջակցել շրջանաձև տնտեսության գործելակերպերին և նպաստել ջեմոցային գազերի (GHG) արտանետումների կրճատմանը՝ նվազեցնելով աղբավայրերում կուտակված թափոնների քանակը և դրա հետ կապված մեթանի արտանետումները:

Կառավարում

ESG





Խորհրդի վերահսկողությունը բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի և հնարավորությունների հարցերում

Խորհուրդը բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի ու հնարավորությունների հիմնական պատասխանատունն է:

Կլիմայական ռիսկերը կառավարվում են որպես Բանկի ավելի ընդարձակ Բնապահպանական և սոցիալական (E&S) ռիսկերի շրջանակի բաղադրիչ և ներառվում են Բանկի կորպորատիվ կառավարման ու ձեռնարկատիրական ռիսկի կառավարման կառուցվածքային համակարգի շրջանակում:

Խորհուրդը՝

- վերահսկում է բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերը,
- սահմանում և հաստատում է Բանկի ռիսկի ախորժակի հայտարարությունը, որի շրջանակում հստակ ներդրվում են ԲՄԿ նկատառումները,
- վերահսկում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի մակարդակների ներառումը ռիսկերի արժեքի գնահատման մեջ՝ ապահովելով վարկային ռիսկերի գնահատականում բնապահպանական և սոցիալական կատարողականի արտացոլումը,
- հետևում է կենսակայունության նպատակների, ռիսկերի ենթարկվելու և երկարաժամկետ արժեքների ստեղծման միջև համաձայնեցվածությունը,
- հաստատում է Բանկի Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականությունը, որով սահմանվում է բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի կառավարման համար համալիր կառուցվածքը, սկզբունքները և կառավարման չափորոշիչները,

Աուդիտի և ռիսկերի կոմիտե (Խորհրդին կից)

Աուդիտի և ռիսկերի կոմիտեն աջակցում է Խորհրդին ձեռնարկատիրական մասշտաբի, այդ թվում՝ բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի կառավարման վերահսկողության հարցում:

Կոմիտեն՝

- վերահսկում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի չափումը և մշտադիտարկումը,
- վերանայում է Համապատասխանության վարչության և Ռիսկերի կառավարման տնօրինության ներկայացրած հաշվետվությունը,
- հետևում է Խորհրդի հաստատած ռիսկի ախորժակի հայտարարության առնչությամբ Բանկի ռիսկային պրոֆիլին,
- վերահսկում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի առնչությամբ ներքին աուդիտի գործունեությունը:

Խորհուրդը, Աուդիտի և ռիսկերի կոմիտեն համատեղ ապահովում են բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի անկախ և համակարգված վերահսկողությունը:



- 2024-ին բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի վերահսկումը էլ ավելի ամրապնդվեց համակարգված եղանակով հաշվետվությունների ներկայացման մեխանիզմների միջոցով:

Ռիսկերի կառավարման տնօրինության ներքո գտնվող Համապատասխանության վարչությունը անմիջականորեն ենթակա է Խորհրդին, Աուդիտի և ռիսկերի կոմիտեին և Վարչությանը:

Բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի կառավարման հարցերով հաշվետվությունների ներկայացումը հաշվետվությունների ներկայացման եռամսյակային շրջափուլի պարտադիր մաս է:

Եռամսյակային հաշվետվությունները թարմացված տեղեկություններ են ներառում՝

- բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի (ESMS) իրականացման կարգավիճակի,
- կլիմայական ռիսկի գործընթացների, այդ թվում՝ ֆիզիկական և անցումային ռիսկերի նկատառումների,
- ռիսկի ախորժակի հայտարարության առնչությամբ ԲՍԿ ռիսկերին ենթարկելու,
- կիրառելի կարգավորիչ և միջազգային գործընկերների պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Ի լրումն դրա, Խորհուրդը ֆորմալ կերպով հաստատում է Համապատասխանության վարչության տարեկան պլանը: Տարեկան պլանը պարտադիր ներառում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարմանը, այդ թվում՝ կառավարման գործունեությանը, դիտանցման առաջնահերթություններին և վերահսկման վերանայմանը նվիրված բաժին:

Հաստատման մեխանիզմը ապահովում է Բանկի հեռանկարային վերահսկման և կառավարման շրջանակում բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի ներառումը:

Վարչություն

Վարչությունը՝

- վերահսկում է Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգերի (ESMS) կիրառումը և շարունակական բարելավումը,
- հաստատում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարմանն առնչվող հիմնական ներքին ընթացակարգերը՝ ապահովելով Խորհրդի հավանությանն արժանացած Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականության գործառնական իրականացումը,
- ապահովում է բնապահպանական և սոցիալական (E&S) նկատառումների ներառումը վարկավորման, պորտֆելների կառավարման և գործառնական գործընթացներում,
- վերանայում է Համապատասխանության վարչությունից և Ռիսկերի կառավարման տնօրինությունից ստացված եռամսյակային հաշվետվությունները,
- ապահովում է գործարար ռազմավարության հետ կենսակայունության նպատակների համաձայնեցվածությունը:

Վարչության դերը բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի ու հնարավորությունների գնահատման գործընթացում

Վարչությունը պատասխանատու է Խորհրդի կողմից սահմանված ռազմավարական ուղղության իրականացման և բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի գործառնական ինտեգրումն ապահովելու համար:



Ռիսկերի կառավարման տնօրինություն և համապատասխանության ապահովման վարչություն

Բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի կառավարման համար գործառնական պատասխանատվությունը դրված է Ռիսկերի կառավարման տնօրինության վրա:

Համապատասխանության ապահովման վարչության շրջանակում գտնվող հատուկ հանձնառությամբ այս ստորաբաժանումը պատասխանատու է՝

- բնապահպանական և սոցիալական ռիսկի գնահատման և մշտադիտարկման,
- կլիմայական, այդ թվում՝ ֆիզիկական և անցումային ռիսկերի ճանաչման,
- բնապահպանական և սոցիալական ռիսկային գործոնները վարկային քաղաքականության մեջ և ապահովագրական գնահատման գործընթացներում ներառելու,
- ԲՄԿ ռիսկերի վերաբերյալ տեղեկությունները ամբողջացնելու և Վարչությանն ու Խորհրդին հաշվետվության տեսքով ներկայացնելու,
- կլիմայի սցենարային վերլուծությանը և արտանետումների մշտադիտարկմանը աջակցելու,
- ԲՄԿ ռիսկերի վերաբերյալ տեղեկությունները ամբողջացնելու և Վարչությանը և Խորհրդին հաշվետվության տեսքով ներկայացնելու համար:

2024-ին Բանկը նաև հրապարակել է իր տարեկան Կորպորատիվ կառավարման հաշվետվությունը, որում մանրակրկիտ բացահայտումներ են արվել կառավարման կառուցվածքի, խորհրդի կազմի, ներքին վերահսկման մեխանիզմների և որոշումների կայացման գործընթացի վերաբերյալ:

Հաշվետվությունը հասանելի է Բանկի պաշտոնական [կայքում](#):

Բնապահպանական և սոցիալական կառավարման կոմիտե (Վարչությանը կից)


Վարչությանը կից գործող Բնապահպանական և սոցիալական կառավարման կոմիտեն ծառայում է որպես Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի իրագործման և կատարելագործման համար պատասխանատու խորհրդատվական մարմին:

Կոմիտեն՝

- կազմակերպում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման հետ կապված աշխատանքը,
- ապահովում է օրենսդրական պահանջների, լավագույն միջազգային փորձի և գործընկեր կառույցների հետ պայմանագրային պարտավորությունների հետ համապատասխանությունը,
- իրեն վերապահված մանդատի շրջանակներում վերանայում է բնապահպանական և սոցիալական ռիսկերի հետ կապված հարցերը և տալիս է խորհուրդներ:



Ռազմավարություն





Բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկեր ու հնարավորություններ

Բանկի Խորհրդի կողմից 2024թ.-ին հաստատված 2025–2027թթ. ռազմավարությունը հատկանշում է «Արդշինբանկ»-ի երկարաժամկետ զարգացման մոդելի շրջանակում բնապահպանական, սոցիալական և կլիմայական նկատառումների ֆորմալ ինտեգրացիոն ալացումը:

Առաջին անգամ կլիմայական ռիսկերը և հնարավորությունները միավորվել են որպես հստակ առանձնացված ռազմավարական հենասյուն՝ ազդանշելով անցում շրջանակահեն համապատասխանությունից դեպի ռազմավարական ինտեգրում:

Ռազմավարությունն իրականացվում է չորս փոխկապակցված չափումային մոդելներով՝ ռիսկերի կառավարում, ապրանքների և պորտֆելի մշակում, ներքին գործառնություններ և մշակույթ:

Պրոդուկտների և պորտֆելի զարգացում

Ռազմավարությամբ կայուն ֆինանսները դիտարկվում են որպես կառուցվածքային աճի հնարավորություն:

2026թ.-ին Բանկը մշակելու և իրականացնելու է կանաչ և կենսակայուն վարկավորման ներքին դասակարգում՝ սահմանելով դրանց համապատասխանության չափանիշները և մշակելու է պահանջներ կանաչ և կենսակայուն ֆինանսավորման համար:

Ֆորմալ առումով ներդրվելու է պատասխանատու վարակավորում՝ պահանջելով հաշվի առնել ֆինանսական որոշումների մեջ բնապահպանական և սոցիալական ազդեցությունները:

Կառավարում

Ռազմավարական շրջափուլը բնապահպանական, սոցիալական և կլիմայական ռիսկերի համար հստակ հաշվետվողականություն է սահմանում կառավարման բոլոր մակարդակներում:

2025-2027թթ.-ն ընկած ժամանակաշրջանում Բանկը հետամուտ է լինելու կենսակայունության 3իմնական կատարողական ցուցիչների (KPI) հետագա ֆորմալացմանը և կատարողական և վարձատրման համակարգերում դրանք ներառելուն:

Ռիսկերի կառավարում

Ռազմավարության կարևորագույն նպատակ է բնապահպանական, սոցիալական և կլիմայական բաղադրիչների ամբողջական ինտեգրումը Բանկի ռիսկերի կառավարման ճարտարապետության մեջ:

2025թ.-ից սկսած բնապահպանական և սոցիալական ռիսկերի բաղադրատարրերը ֆորմալ առումով ինտեգրվելու են վարկային ռիսկի գնահատման գործընթացում: Բոլոր բիզնես վարկերը դասակարգվելու են ըստ բնապահպանական և սոցիալական ռիսկի կատեգորիաների:

2025թ.-ին իրականացվելու են կլիմայական ռիսկերի ենթարկվածության պորտֆելային մակարդակի նյութականության գնահատում:

Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգը (ESMS) կանցնի հետագա ամրապնդման գործընթաց, իսկ կլիմայական սթրեսի փորձարկումը ծրագրվում է միջնաժամկետ ռազմավարական հորիզոնում:



Գործառնություններ, մշակույթ և ներքին գործընթացներ

Ռազմավարությունն անդրադառնում է նաև բնապահպանական և սոցիալական գործոններից առաջացող ներքին հետևանքներին:

Բանկը մշակելու է ածխածնային հետքի հաշվարկման մեթոդաբանություններ և գործիքներ, այդ թվում PCAF հետ համագործակցությամբ ստանձնած հանձնառություններին համապատասխան՝ ֆինանսավորվող արտանետումների չափման համար:

Թափանցիկությանը նպաստելու համար Բանկը նախատեսում է հրապարակել 2024թ. հաշվետու տարին ներկայացնող կենսակայունության և կլիմայի վերաբերյալ իր առաջին հաշվետվությունը:

Ներքին կարողությունների ստեղծումը ռազմավարական առաջնահերթություն է: Ռազմավարությամբ ամրապնդվում է նաև էթիկային համապատասխանող բիզնես վարքագիծ և շահագրգիռ կողմերի հաշվետվողականություն:

Բանկը ներդնելու է բնապահպանական և սոցիալական բողոքների ստացման և մշակման ֆորմալ մեխանիզմ՝ ապահովելով թափանցիկություն և համակարգված հետևողականություն:

Գործարար էթիկայի չափորոշիչները և պատասխանատու վարքագծի սկզբունքներն անբաժանելի են մնում կենսակայունության ինտեգրման հետ:

Աշխատավայրերում իրականացված նախաձեռնությունները խթանելու են բազմազանությանը և ներառականությանը, աշխատակիցների ներգրավվածությանը, աշխատանք-կյանք բալանսին և բնապահպանական խնդիրների վերաբերյալ իրազեկվածությանը: Նախաձեռնություններից են 2024թ.-ից սկսած աղբի տեսակավորման գործընթացը և ներքին բնապահպանական արշավները:

Այս ռազմավարական ինտեգրումն արտացոլում է Բանկի կողմից ֆինանսական կայունության, պորտֆելի որակի և կայուն աճի հետ բնապահպանական և սոցիալական կատարողականի ըստ էության կապված լինելու փաստի ճանաչումը:

2024թ.-ին «Արդշինբանկ»-ը դարձավ Ածխածնի արտանետումների հաշվառման ֆինանսական համագործակցության (PCAF) անդամ՝ հանձնառություն ստանձնելով միջազայնորեն ճանաչված մեթոդաբանությունների համաձայն իրականացնել ջերմոցային գազերի ֆինանսավորվող արտանետումների չափումն ու բացահայտումը: Այդ անդամակցությունը սահմանում է ֆինանսավորվող արտանետումների հաշվառման ուղղությամբ համակարգված ուղի, տվյալների որակի բարելավում և թափանցիկության աճ:

Քանակական կլիմայական թիրախները նախատեսվում է մշակել 2026–2027թթ.-ին:



Ardshinbank

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

RISK



Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարում

2024թ.-ին Բանկը վերանայեց և էլ ավելի ամրապնդեց իր Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգը (ESMS): Բանկը պահպանում է ESMS շրջանակ՝ վարկավորման գործունեության մեջ բնապահպանական և սոցիալական ռիսկերը ծանաչելու, գնահատելու և կառավարելու համար:

Կորպորատիվ բոլոր հաճախորդները (բացառությամբ մանրածախ վարկավորման) անցնում են ՄՖԿ Կատարողական չափորոշիչներին և կիրառելի ներպետական կարգավորիչ պահանջներին համապատասխան բնապահպանական և սոցիալական ռիսկերի սկրինինգ և գնահատում:

Երբ ծանաչվում են բնապահպանական կամ սոցիալական ռիսկերը, մշակվում են մեղմացնող միջոցառումներ և ըստ անհրաժեշտության Բնապահպանական ու սոցիալական գործողությունների պլաններ (ESAP):

Բանկն այս մեղմացնող միջոցառումների արդյունավետ կառավարման և կայունության չափորոշիչների համապատասխանեցման համար կիրառում է նաև այս մեղմացնող միջոցառումների շարունակական մոնիթորինգ:

Կլիմայական ռիսկերի նույնականացում և սցենարային շրջանակ

2024թ.-ին «Արդշինբանկ»-ն անկախ տեխնիկական խորհրդատուի աջակցությամբ իրականացրեց կլիմայական ռիսկերի համակարգված գնահատում, ինչը թույլ կտա կլիմայական դիտարկումները աստիճանաբար ինտեգրել ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման շրջանակում (ERM):

Գնահատումն անդրադարձ էր կատարում բանկի կորպորատիվ վարկային պորտֆելին և նախատեսված էր որպես ուղղահայաց առարկայական սրինինգի գործիք, որ նպատակն էր կլիմայական ռիսկային գործոնների հանդեպ խոցելիության և պորտֆելային զգայունության գնահատումը:

SSP1-2.6 (Ձուտ զրոյական փարիզյան համաձայնագրին համապատասխանեցված ուղեգիծ)

SSP2-4.5 (Երկարաձգված անմիջական անցման սցենար)

SSP5-8.5 (Բարձր արտանետում/ սահմանափակ անցումային ուղեգիծ)²

Սցենարային լուծումը արտացոլում է և՛ կանոնավոր և՛ անկանոն անցումային դինամիկա, ինչպես նաև բարձր ֆիզիկական ռիսկի հետագծեր՝ այդպիսով ժամանակային հորիզոններում հնարավոր դարձնելով սթրեսի հանդեպ զգայունության համեմատական վերլուծությունը:

Վերլուծության մաս են կազմել՝

- ֆիզիկական ռիսկերը (սուր և խրոնիկական),
- անցումային ռիսկերը (քաղաքականություն, տեխնոլոգիա, շուկա և նորմատիվ իրավական փոփոխություններ):



Բանկը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հորիզոններում կիրառել է միջազգայնորեն ճանաչված երեք կլիմայական սցենարներ¹ (2030, 2040, և 2050):

Կլիմայական ռիսկերի նույնականացում և սցենարային շրջանակ

2024թ.-ին «Արդշինբանկ»-ն անկախ տեխնիկական խորհրդատուի աջակցությամբ իրականացրեց կլիմայական ռիսկերի համակարգված գնահատում, ինչը թույլ կտա կլիմայական դիտարկումները աստիճանաբար ինտեգրել ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման շրջանակում (ERM):

Գնահատումն անդրադարձ էր կատարում բանկի կորպորատիվ վարկային պորտֆելին և նախատեսված էր որպես ուղղահայաց առարկայական սրինինգի գործիք, որ նպատակն էր կլիմայական ռիսկային գործոնների հանդեպ խոցելիության և պորտֆելային զգայունության գնահատումը:

Բանկը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հորիզոններում կիրառել է միջազգայնորեն ճանաչված երեք կլիմայական սցենարներ¹ (2030, 2040, և 2050):

¹SSP1-2.6 - Կաղ և համակարգված արձագանքման քաղաքականությունը հանգեցնում է էներգիայի, տրանսպորտի և արդյունաբերական ոլորտների արագ դեկարբոնիզացմանը՝ Փարիզյան համաձայնագրի նպատակներին համահունչ: Ըստ այդ ուղու, գլոբալ ջերմաստիճանի բարձրացումը մինչև 2100թ. սահմանափակվում է 1.5-2°C-ով՝ ներկայացնելով ածխածնի ցածր պարունակության կայուն տնտեսական անցում: 2030-ականներին, վերականգնվող էներգիային անցման արագացմանը և ածխածնի ցածր պարունակությամբ տեխնոլոգիաներում ներդրումների արագացմանը զուգընթաց, արտանետումները արագ նվազեցին, ինչի հետևանքով առաջացան կարճաժամկետ չափավոր անցումային ռիսկեր:

Մինչև 2040-ականները էներգիայի ոլորտի զգալի մասնահատված կրեկարբոնացվի, իսկ տրանսպորտի էլեկտրականացումը կընդլայնվի, մինչդեռ կլիմայական ռիսկերը ալբեյի բարձր արտանետումային սցենարների համեմատ կսկսեն պակասել: Մինչև 2050թ. արդյունաբերության և տրանսպորտի զգալի փոխակերպման պայմաններում, երբ ֆինանսական համակարգը հարմարեցված կլինի ածխածնի ցածր պարունակությամբ տնտեսությամբ, գլոբալ արտանետումները մոտ կլինեն գրոյական ցուցանիշների, ինչի արդյունքում կստեղծվեն երկարաժամկետ ֆիզիկական զգալի ալբեյի ցածր կլիմայական ռիսկեր: SSP2-4.5 - Աստիճանական և անհավասար իրականացումը հանգեցնում է արտանետումների ալբեյի դանդաղ կրճատման և երկարաձգում անցումը ածխածնի ցածր պարունակությամբ տնտեսությանը: Մինչև 2030թ.-ը արտանետումների կրճատումները կմնան սահմանափակ, իսկ քարածխային վառելիքներից կախվածությունը կպահպանվի. գլոբալ տաքացման ցուցանիշը կհասնի 2.5°C -ի: Մնացումային ռիսկերը այս փուլում կմնան չափավոր, բայց կլիմայական քաղաքականության կտրուկ խստացման պարագայում կարող են ուժգնանալ:

Մինչև 2040թ., կանաչ տեխնոլոգիաների ընդունումը տարածաշրջանից տարածաշրջան կգրանցի աստիճանական և անհավասար առաջընթաց. միևնույն ժամանակ գլոբալ տաքացումը կմոտենա 2.3°C-ի, իսկ ֆիզիկական այնպիսի ռիսկերը, ինչպիսիք են անոմալ շոգը և եղանակային էքստրեմալ այլ պայմաններ, կդառնան ալբեյի հաճախակի: Մինչև 2050թ. արտանետումները կմնան ցանկալի մակարդակից ալբեյի բարձր նշանոցում, իսկ դեկարբոնացման կիացողվի հասնել միայն մասամբ, քանի որ գլոբալ ջերմաստիճանային ցուցանիշները կբարձրանան մինչև 2.6-2.8°C՝ եղանակային ցնցումների և նորմատիվ-իրավական հնարավոր փոփոխությունների հետևանքով պորտֆելների համար առաջացնելով չափավոր բայց աճող կլիմայական սթրես:

SSP5-8.5 թույլ կամ ուշացած կլիմայական գործողության հետևանքով կայուն կերպով կբարձրանա արտանետումների մակարդակը, իսկ քարածխային վառելիքի լայն կիրառությունը կկրի շարունակական բնույթ: Այս ուղեգծի համաձայն, գլոբալ ջերմաստիճանային ցուցանիշները կարող են մինչև 2100թ.-ը բարձրանալ 4-5°C-ով՝ առաջացնելով լուրջ կլիմայական ռիսկեր, այդ թվում՝ տապ, երաշտներ և ջրհեղեղ:

Մինչև 2030թ. քարածխային վառելիքից ածխածնի ինտենսիվ քանակություն սպառող արդյունաբերության շյուղերի և տրանսպորտի մեծ կախվածության պայմաններում արտանետումները կշարունակեն աճել. գլոբալ տաքացումը կհասնի 2.5°C-ի: Մնացումային ռիսկերը այս փուլում կմնան հարաբերականորեն ցածր, թեպետ կսկսեն ի հայտ գալ վաղ կլիմայական ազդեցություններ: Մինչև 2040թ. արտանետումները դեռ կաճեն, իսկ վերականգնվող էներգիային անցումը կմնա նվազում նշանոցում, միևնույն ժամանակ գլոբալ ջերմաստիճանային ցուցանիշները կմոտենան 3.5°C-ին, իսկ ֆիզիկական ռիսկերը կմնան զգալի՝ ֆինանսական պորտֆելների ենթարկելով աստիճանաբար աճող սթրեսի:

Մինչև 2050թ. արտանետումների բարձր ցուցանիշները կպահպանեն կայուն ցուցանիշներ, իսկ էներգետիկ համակարգերը կմնան մեծ չափով անփոփոխ. գլոբալ տաքացումը կհասնի 4-4.5°C-ի՝ հանգեցնելով ծանր ֆիզիկական ազդեցությունների և քաղաքականության կտրուկ արձագանքների, որոնց կարող են սուր ֆինանսական կորուստների խթան լինել:



Պորտֆելի վրա կլիմայական առավելագույն հնարավոր ազդեցությունը՝ ըստ վտանգի

(ռիսկի ենթարկվելու ընդհանուր ցուցանիշի %) SSP1-2.6

Ոլորտ	Անումալ շոգ			Երաշտ			Ջրհեղեղ			Մոդանք		
	2030	2040	2050	2030	2040	2050	2030	2040	2050	2030	2040	2050
Գյուղատնտեսություն, անտառաբուծություն և ձկնորսություն	0.12%	0.18%	0.22%	0.20%	0.51%	0.67%	0.05%	0.03%	0.04%	0.02%	0.03%	0.02%
Հանքարդյանության և քարհանքագործություն	0.07%	0.12%	0.16%	0.13%	0.32%	0.40%	0.04%	0.04%	0.04%	0.24%	0.28%	0.30%
Արտադրություն	0.10%	0.14%	0.18%	0.09%	0.23%	0.30%	0.09%	0.06%	0.07%	0.03%	0.03%	0.03%
Էլեկտրականության, գազի, գոլորշու և ջրային էներգիայի համակարգերի մատակարարում	0.08%	0.12%	0.14%	0.11%	0.26%	0.34%	0.03%	0.02%	0.02%	0.04%	0.05%	0.05%
Շինարարություն	0.43%	0.64%	0.78%	0.10%	0.26%	0.34%	0.18%	0.11%	0.14%	0.09%	0.10%	0.10%
Մանրածախ և մեծածախ առևտուր	0.04%	0.06%	0.08%	0.09%	0.22%	0.29%	0.08%	0.05%	0.06%	0.04%	0.05%	0.04%
Փոխադրում և պահեստավորում	0.06%	0.09%	0.11%	0.03%	0.07%	0.10%	0.03%	0.02%	0.03%	0.01%	0.01%	0.01%

SSP2-4.5

Ոլորտ	Անումալ շոգ			Երաշտ			Ջրհեղեղ			Մոդանք		
	2030	2040	2050	2030	2040	2050	2030	2040	2050	2030	2040	2050
Գյուղատնտեսություն, անտառաբուծություն և ձկնորսություն	0.13%	0.19%	0.26%	0.55%	0.55%	0.77%	0.04%	0.04%	0.04%	0.03%	0.03%	0.03%
Հանքարդյանության և քարհանքագործություն	0.16%	0.13%	0.19%	0.38%	0.38%	0.48%	0.04%	0.04%	0.05%	0.24%	0.27%	0.29%
Արտադրություն	0.12%	0.15%	0.20%	0.25%	0.25%	0.34%	0.07%	0.08%	0.07%	0.03%	0.03%	0.03%
Էլեկտրականության, գազի, գոլորշու և ջրային էներգիայի համակարգերի մատակարարում	0.11%	0.12%	0.17%	0.28%	0.28%	0.39%	0.02%	0.03%	0.02%	0.05%	0.05%	0.05%
Շինարարություն	0.42%	0.68%	0.90%	0.28%	0.28%	0.40%	0.14%	0.14%	0.13%	0.09%	0.10%	0.10%
Մանրածախ և մեծածախ առևտուր	0.04%	0.07%	0.09%	0.24%	0.24%	0.33%	0.06%	0.07%	0.06%	0.04%	0.05%	0.05%
Փոխադրում և պահեստավորում	0.06%	0.10%	0.13%	0.08%	0.08%	0.11%	0.03%	0.03%	0.03%	0.01%	0.01%	0.01%

SSP5-8.5

Ոլորտ	Անումալ շոգ			Երաշտ			Ջրհեղեղ			Մոդանք		
	2030	2040	2050	2030	2040	2050	2030	2040	2050	2030	2040	2050
Գյուղատնտեսություն, անտառաբուծություն և ձկնորսություն	0.12%	0.20%	0.30%	0.21%	0.50%	1.06%	0.05%	0.04%	0.04%	0.03%	0.03%	0.03%
Հանքարդյանության և քարհանքագործություն	0.07%	0.14%	0.24%	0.13%	0.33%	0.64%	0.04%	0.04%	0.05%	0.24%	0.28%	0.31%
Արտադրություն	0.10%	0.16%	0.24%	0.09%	0.22%	0.47%	0.09%	0.07%	0.07%	0.03%	0.03%	0.03%
Էլեկտրականության, գազի, գոլորշու և ջրային էներգիայի համակարգերի մատակարարում	0.08%	0.13%	0.19%	0.11%	0.26%	0.53%	0.03%	0.02%	0.02%	0.05%	0.05%	0.05%
Շինարարություն	0.44%	0.72%	1.05%	0.10%	0.26%	0.54%	0.18%	0.14%	0.14%	0.09%	0.10%	0.10%
Մանրածախ և մեծածախ առևտուր	0.04%	0.07%	0.10%	0.09%	0.22%	0.46%	0.08%	0.06%	0.07%	0.04%	0.05%	0.05%
Փոխադրում և պահեստավորում	0.06%	0.10%	0.15%	0.03%	0.07%	0.15%	0.03%	0.03%	0.03%	0.01%	0.01%	0.01%



Նշանակությունը ըստ գույնի

- Ռիսկերի ենթարկվելու բարձր հավանականություն ($>0.50\%$)
- Ռիսկերի ենթարկվելու միջին հավանականություն ($0.20\% - 0.50\%$)
- Ռիսկերի ենթարկվելու չափավոր հավանականություն ($0.10\% - 0.20\%$)
- Ռիսկերի ենթարկվելու ցածր հավանականություն

Մոդելներից մեկի արդյունքներից պարզ է դառնում.

- երաշտի ռիսկերը մինչև 2050թ. ցույց են տալիս խիստ տեմպերով աճող հետագիծ՝ արտացոլելով
- գյուղատնտեսության և ջրի ինտենսիվ քանակություն սպառող ոլորտների կառուցվածքային խոցելիությունը,
- անոմալ շոգին ենթարկվելու օրինակները ցույց են տալիս ջերմաստիճանի կանխատեսվող փոփոխականությանը համահունչ կայուն աճի պատկեր,
- ջրհեղեղի ռիսկը մոդելավորված սցենարներով շարունակում է մնալ կայուն՝ ենթադրելով,
- սահմանափակ խտություն բարձր ռիսկային աշխարհագրական տեղանքներում,
- սողանքների ռիսկը ներկայացնում է մարզինալ աճի միտում,
- անտառային հրդեհների և առատ տեղումների ազդեցությանը ենթարկվելու հավանականությունը առկա պորտֆելի կազմության մակարդակներում մնում է ցածր և անփոփոխ:

Ռիսկերի կառավարման տեսակյունից կորստի մոդելավորված հարաբերակցությունը համեմատական է ընդհանուր չմարված պարտավորությունների ծավալին, սակայն ավելի երկարատև ժամանակային հորիզոններում միտման ուղղվածությունը կարևորագույն մոնիթորինգային ցուցիչ է:



Անցումային ռիսկերը գնահատվել են SSP1-2.6 և SSP2-4.5 սցենարներով՝ ներառելով հետևյալ խթանիչ գործոնները.

- ածխածնային քաղաքականության խստացում և ածխածնի գնի սահմանման հնարավոր մեխանիզմներ,
- տեխնոլոգիական փոխարինման և էլեկտրաֆիկացման միտումներ,
- շուկայի վերատեսչաբաշխումը ավելի ցածր արտանետումներով ոլորտների ուղղությամբ,
- դեկարբոնացման ճնշում ինտենսիվ էներգիա սպառող արտադրական ճյուղերում:

Անցումային ռիսկերի ենթարկվելու Բանկի հավանականությունը ներկայումս գնահատվում է չափավոր և առաջնայնորեն կենտրոնացված է Արտադրությանը, Տրանսպորտին և Էներգիային առնչվող գործունեության տեսակների վրա:

Թեպետ կապիտալի արժեքի անմիջական նվազման ռիսկը սահմանափակ է, միջինից երկարաժամկետ կառուցվածքային անցումային ճնշումը կարող է ազդել ոլորտի եկամտաբերության, ծախսային կառուցվածքների և վարկային ռիսկի մեղմացման մոդելների վրա:

Չափանիշներ և թիրախներ²





Ֆինանսավորվող արտանետումներ (PCAF-ի հետ համապատասխանեցված գնահատում)

2024-ի կեսերին «Արդշինբանկ»-ը դարձավ Աժխաժնի արտանետումների հաշվառման ֆինանսական համագործակցության (PCAF) անդամ՝ հանձնառություն ստանձնելով միջազգայնորեն ճանաչված մեթոդաբանությունների կիրառմամբ չափել և բացահայտել ջերմոցային գազերի ֆինանսավորվող արտանետումները:

PCAF-ին անդամակցության իր հանձնառության շրջանակներում Բանկը ֆինանսավորվող արտանետումները հաշվարկելիս կիրառել է PCAF-ի մեթոդաբանական ուղեցույցը և արտանետումների գործոնների տվյալների շտեմարանը: Քանի որ Հայաստանին հատուկ արտանետումների գործոնին առնչվող տվյալը ներկայումս բավարար ուսումնասիրված չէ, Բանկը հիմք է ընդունել PCAF-ի տվյալների շտեմարանից ստացված միջնորդ երկրների գործոնները: Միջնորդ երկրներ ընտրելիս «Արդշինբանկ»-ը կիրառել է համեմատականության մի շարք չափանիշներ, այդ թվում՝ էներգիայի բալանսի, ՀՆԱ կառուցվածքի և բնակչությանը բնորոշ հատկանիշների նմանություն՝ Հայաստանի տնտեսական և բնապահպանական համատեքստին հնարավորինս մոտ ներկայացուցականություն ապահովելու համար:

Ֆինանսավորվող արտանետումների հաշվարկում ամփոփվել են բիզնես վարկերին, առևտրային անշարժ գույքի ֆինանսավորմանը և նախագծերի ֆինանսավորմանն առնչվող բանկի չմարված պարտավորությունները (ինչն իրականացվել է PCAF-ի ակտիվների դասի կիրառելի մեթոդաբանության համաձայն):

2024թ.-ի համար ընդհանուր ֆինանսավորվող արտանետումները հաշվարկվել են հետևյալ կերպ.

Ֆինանսավորվող արտանետումները ըստ ոլորտների

ՏՏՀ ոլորտ	Ծավալ (%)	Ֆինանսավորվող արտանետումներ (tCO ₂ e)	Ընդհանուր արտանետումների մասնաբաժին (%)
Գյուղատնտեսություն	5.49%	57,307.19	8.19%
Հանքարդյունաբերություն	9.19%	15,022.71	2.15%
Արտադրություն	6.77%	55,329.99	7.90%
Էլեկտրականություն և զազ	5.86%	47,264.64	6.75%
Ջրամատակարարում և թափոններ	0.00%	36.53	0.01%
Շինարարություն	21.97%	33,228.51	4.75%
Մեծածախ և մանրածախ առևտուր	9.72%	220,902.66	31.55%
Տրանսպորտ	3.10%	153,368.37	21.91%
Մուտք և կեցավայրով ապահովում	11.43%	8,854.11	1.26%
Հրատարակչական գործունեություն և լրատվամիջոցներ	0.00%	4.89	0.00%
Հեռահաղորդակցություն և ՏՏ	6.06%	14,492.64	2.07%
Ֆինանսական գործունեություն	0.28%	181.52	0.03%
Անշարժ գույք	3.57%	3,848.33	0.55%
Մասնագիտական գործունեություն	0.38%	2,247.20	0.32%
Վարչական ծառայություններ	0.31%	1,417.88	0.20%
Հանրային կառավարում	15.13%	84,677.69	12.09%
Education Կրթություն	0.03%	31.20	0.00%
Health & Social Work Առողջապահություն և սոցիալական աջակցություն	0.45%	1,604.52	0.23%
Արվեստ և ժամանց	0.16%	59.22	0.01%
Այլ ծառայություններ	0.08%	240.48	0.03%
Ընդհանուր	100%	700,120.28	100%



²Մեթոդաբանություն, տվյալների աղբյուրներ և սահմանափակումներ. Բանկի որ 2024-ը Բանկի համար նշանավորվում է որպես PCAF մեթոդաբանությանը համապատասխան ֆինանսավորվող չափում և բացահայտում իրականացնելու առաջին տարին, արդյունքները հարկ է դիտարկել որպես ներկա պահին առկա տվյալների, ենթադրությունների և ոլորտային արտանետումների վրա հիմնված նախնական գնահատում: Թեպետ բանկը ողջամիտ քայլեր է ձեռնարկել մեթոդաբանական համապատասխանությունը և ձանաչված միջազգային շրջանակների օգտագործումը ապահովելու համար, տվյալների հասանելիության, անողղակի արտանետումների գործոնների և կլիմայական չափման մեթոդաբանության աճող բնույթով պայմանավորված որոշ սահմանափակումներ դեռ մնում են:

Մասնավորապես՝ մեթոդաբանությունը հենվում է մոդելի վրա հիմնված գնահատումների և արդյունաբերական ցուցիչների տվյալների վրա, որտեղ դեռևս առկա չեն տեղեկություններ վարկառուի մակարդակով իրականացվող արտանետումների վերաբերյալ: Արդյունքում, հաշվարկված արտանետումները հարկ է մեկնաբանել ոչ այնքան որպես Բանկի ֆինանսավորվող արտանետումներից առաջացող հետևանքներ, որքան որպես նախնական գնահատումների արդյունք:

Բանկը այս գնահատումը դիտում է որպես կլիմայական ռիսկերի և արտանետումների կարողությունները զարգացնելու առաջին կարևոր քայլ և մտադիր է տվյալների որակի կատարելագործմանը զուգընթաց հետագա հաշվետու ժամանակահատվածներում աստիճանաբար բարելավել ֆինանսավորվող արտանետումների ճշգրտությունը, կիրառելիության շրջանակները և մանրակրկիտությունը:

Ֆինանսավորվող արտանետումների շրջանակի տրոհում

Ֆինանսավորվող արտանետումների շրջանակ ³	Արտանետումներ (tCO ₂ e)	Մասնաբաժին (%)
Շրջանակ 1	296,505.88	42.35%
Շրջանակ 2	11,471.49	1.64%
Շրջանակ 3	392,142.91	56.01%
Ընդհանուր	700,120.28	100%

Ֆինանսավորվող արտանետումների տվյալների որակի բաշխում (2024)

Թափանցիկության ապահովման և ֆինանսավորվող արտանետումների հաշվարկների արժանահավատության բարձրացման նպատակով Բանկը գնահատում է վերլուծության ընթացքում կիրառվող տվյալները՝ հաշվի առնելով դրանց մանրամասնության և ճշգրտության մակարդակը:

PCAF միավորի կարգ ⁴	Ֆինանսավորվող արտանետումների մասնաբաժին (%)
Score 4 / 3a (Model-based, higher granularity) Միավոր 4/ 3a (Մոդելի վրա հիմնված ավելի բարձր ճշգրտություն)	18.40%
Score 5 / 3c (Industry proxy / sector averages) Միավոր 5/ 3c (Արդյունաբերական ցուցիչ/ոլորտի միջին ցուցանիշներ)	81.60%
Total Ընդհանուր	100%



Բաշխումը արտացոլում է Բանկի ֆինանսավորվող արտանետումների չափման ներկայիս փուլը:

«Արդշինբանկ»-ը նախատեսում է բարելավել տվյալների որակը և հետագա հաշվետու ժամանակահատվածներում մեծացնել ավելի բարձր ճշգրտությամբ տվյալներով աղբյուրների մասնաբաժինը:

Գործառնական (սեփական) արտանետումներ – 2024

Կլիմայական ռիսկի կառավարման և թափանցիկության հանձնառությունների շրջանակում «Արդշինբանկ»-ը հաշվետու տարվա համար հաշվարկել է գործառնական ջերմոցային գազերի արտանետումների իր ցուցանիշները:

Արտանետումները գնահատվել են ըստ Շրջանակ 1-ի Շրջանակ 2-ի և Շրջանակ 3-ի՝ առանձին ընտրված կատեգորիաների:

Կոնսոլիդացված գործառնական արտանետումների աղյուսակ (2024)

Արտանետումների կարգ	Նկարագրություն	2024 Արտանետումներ (tCO ₂ e)	Գործառնական արտանետումների մասնաբաժին (%)
Շրջանակ 1	Վառելիքի այրման հետևանքով ստացվող ուղղակի արտանետումներ (շաբժական եղանակով մեքենաներում իրականացվող այրում)	86	0.55%
Շրջանակ 2	Անուղղակի արտանետումներ գնված էլեկտրաէներգիայից Գնված ջեռուցման/հովացման համակարգ	1,448	9.4%
Շրջանակ 3	Աշխատողների տեղաշարժ. Գնված ապրանքներ և ծառայություններ. Թափոններ և ջուր, Գործողում	13,867	90%
Ընդհանուր գործառնական արտանետումներ		15,401 tCO ₂ e	100%

Բանկի 2024թ. ընդհանուր գործառնական արտանետումները կազմում են 15,401տ. CO₂, ինչը մասշտաբով ֆինանսական արտանետումների համեմատ հարաբերականորեն ցածր ցուցանիշ է:

Ի հայտ են գալիս մի քանի կարևորագույն դիտարկումներ.

³Շրջանակ 1 (Ուղղակի արտանետումներ).

Արտանետումները ծագում են ֆինանսավորվող անձանց պատկանող կամ վերջիններիս կողմից վերահսկվող աղբյուրներից, ինչպիսիք են օրինակ՝ ընկերության տարածքում վառելիքի այրումը, արդյունաբերական գործընթացները կամ ընկերությանը պատկանող մեքենաները:

Շրջանակ 2 (Եներգիայի սպառման հետևանքով առաջացող անուղղակի արտանետումներ

Արտանետումները կապված են ֆինանսավորվող կազմակերպությունների կողմից սպառվող գնված էլեկտրաէներգիայի, ջեռուցման կամ հովացման գործընթացների գեներացման հետ: Թեպետ այս արտանետումները տեղի են ունենում էներգաարտադրողի աշխատանքային տարածքներում, դրանք վերագրվում են էներգիա օգտագործող կազմակերպություններին:

Շրջանակ 3 (Այլ անուղղակի արտանետումներ)

Մյուս բոլոր անուղղակի արտանետումները տեղի են ունենում ֆինանսավորվող կազմակերպությունների արժեքի շղթայի մասշտաբով: Այն կարող է ներառել ձեռք բերված ապրանքներին և ծառայություններին, փոխադրումներին, գործողումներին և վաճառված ապրանքների օգտագործմանը առնչվող արտանետումները:

⁴Միավոր 4/ 3a Մոդելի վրա հիմնված ավելի բարձր աստիճանի մանրակրկտություն. Արտանետումները հաշվարկվում են օգտագործելով բարձր կենսայնությամբ մոդելների հետ համակցված հաճախորդի կամ ակտիվի մակարդակի տվյալներ, որոնք ճշգրիտ և մանրակրկիտ չափումներ են ապահովում:

Միավոր 5/3 c – Արդյունաբերական ցուցիչ/դուրսի միջին ցուցանիշներ. Յստակ տվյալների բացակայության պարագայում ոլորտային կամ արդյունաբերական միջին ցուցանիշներ, որոնք հետևողական են, բայց ոչ այնքան մանրակրկիտ:



Շրջանակ 1

Շրջանակ 1-ում ներկայացված ատանետումները կազմում են գործառնական ընդհանուր արտանետումների 0.55%-ը և առաջնայնորեն կապված են տրանսպորտի և օբյեկտների շահագործման վառելիքի սպառման հետ: Սա ցույց է տալիս, որ վառելիքի ուղղակի գործածությունը մնում է Բանկի ներքին ածխածնի սպառումից առաջացող հետևանքների առաջնային խթանը:

Ռիսկերի ենթարկվելու հավանականությունը կառավարելի անցումային ռիսկ է՝ հաշվի առնելով, որ տրանսպորտային միջոցների հավաքակազմի էլեկտրականացումը և էներգաարդյունավետության ոլորտի բարելավումը կարող են ռազմավարական հորիզոնում աստիճանաբար կրճատել այս բաղադրիչը:

Շրջանակ 3

Շրջանակ 3-ի արտանետումները, այդ թվում՝ աշխատակիցների տեղաշարժը, ձեռք բերված ապրանքները և ծառայությունները, արդյունաբերական ապրանքները, թափոնները և ջուրը ներկայացնում են գործառնական արտանետումների ամենամեծ մասնաբաժինը՝ 90%:

Աշխատողների տեղաշարժը միայն գործառնական արտանետումների 48.23%-ն է կազմում (7,429tCO₂e), որից ավելի քան 70% երթևեկության հետ կապված արտանետումները վերագրվում են բենզինով աշխատող անձնական օգտագործման ավտոմեքենաներին, մինչդեռ աշխատակիցների շուրջ 30%-ը օգտագործում է ցածր արտանետումներով կամ էկոլոգիապես անվտանգ երթևեկության միջոցներ (քայլք, հեծանիվ, հանրային տրանսպորտ կամ էլեկտրական մեքենաներ):

Այս կատեգորիան ընդգծում է հնարավորությունների ոլորտ, որտեղ վարքագծային նախաձեռնությունները և շարժումակությունը կարող են նպաստել հավելյալ արտանետումների կրճատմանը՝ չունենալով նյութական ֆինանսական որևէ ազդեցություն:

«Արդշինբանկ»-ի 2024թ.-ի Կլիմայի հետ կապված ֆինանսական բացահայտումների աշխատանքային խմբին (TCFD) առնչվող բացահայտումը՝ բնապահպանական, սոցիալական և կլիմայական նկատառումների առաջին համապարփակ ինտեգրումն է Բանկի կառավարման, ռազմավարության և ռիսկերի կառավարման շրջանակում: Հաշվետու տարում Բանկը սահմանել է ռիսկերի գնահատման հստակ համակարգված գործընթաց, իրականացրել բազմասցենար վերլուծություններ բազմատեսակ սցենարային հորիզոններում, PCAF-ի չափորոշիչներին համապատասխան հաշվարկել է շահագործման հետ կապված և ֆինանսավորվող արտանետումները և իր ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման համակարգում ներդրել կլիմայական և բնապահպանական և սոցիալական (E&S) ռիսկերը:

Թեև քանակական կլիմայական թիրախները ֆորմալ առումով դեռևս չեն ընդունվել, 2025–2027թթ. ռազմավարական պլանը հստակ ուղի է սահմանում չափելի նպատակների, տվյալների ավելի լավ որակի, վարկառուի մակարդակում տեղեկատվության հավաքման կատարելագործված մեխանիզմների և երկարաժամկետ կենսակայունության նպատակների հետ պորտֆելի համաձայնեցման ուղղությամբ: Բանկը գիտակցում է, որ կլիմայական ռիսկերի կառավարումը ձևավորվող գիտակարգ է, որը պահանջում է մեթոդաբանությունների շարունակական կատարելագործում, ներքին կարողությունների ամրապնդում, ինչպես նաև կարգավորող ակնկալիքների և միջազգային լավագույն փորձի հետ սերտ համապատասխանեցում:



Ardshinbank

**Ֆեռանկար և հետագա
առաջնահերթություններ**



Ardshinbank



Հեռանկար և հետագա առաջնահերթություններ

Բանկը կլիմայական ռիսկերը համարում է ոչ միայն նորմատիվ-իրավական պահանջ, այլև ռիսկերի խելամիտ կառավարման և պատասխանատու բանկային գործունեության անբաժանելի մաս:

«Արդշինբանկ»-ը հանձնառու է մնում թափանցիկությանը, հաշվետվողականությանը և կանոնակարգողների, ներդրողների և ավելի լայն համայնքի հետ կառուցողական ներգրավվածությանը:

Կլիմայական ռիսկերի կառավարման իր շրջանակի հետագա ամրապնդման և կենսակայուն աճին աջակցելու նպատակով Բանկը առանձնացրել է հետևյալ հիմնական առաջնահերթությունները.

- **Սահմանել որակական կլիմայական թիրախներ** մշակել չափելի կլիմայական թիրախներ և իրականացնել 2026–2028թթ. անցումային պլան,

- **Բարելավել կլիմայական ռիսկերի ներդրումը և ԲՄԿ կառավարումը**

Շարունակել կլիմայական ռիսկերի ներդրումը վարկային ռիսկի գնահատման գործընթացում և ամրապնդել ԲՄԿ կառավարումը և հաշվետվողականությունը,

- **Աշխատել ԲՄԿ տվյալների և արտանետումների չափման գործընթացում դրական տեղաշարժի արձանագրման ուղղությամբ**

առաջխաղացում գրանցել ջերմոցային գազերի արտանետման չափումների և մշտադիտարկման (այդ թվում՝ PCAF հանձնառությունների հետ կապված) աշխատանքներում և ավտոմատացված համակարգերի միջոցով նպաստել տվյալների որակի բարձրացմանը,

- **Մշակել կայուն ֆինանսավորման շրջանակ և պորտֆելի դասակարգում**

Սահմանել կենսակայուն վարկավորման չափանիշներ և ԲՄԿ չափորոշիչների համաձայն իրականացնել վարկային պորտֆելի դասակարգում,

- **Ուժեղացնել Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգը (ESMS) ու բնապահպանական և սոցիալական E&S ռիսկերի կառավարումը**

Շարունակել բարելավել բնապահպանական և սոցիալական ռիսկերի դասակարգման, գնահատման և մշտադիտարկման գործընթացները,

- **Բարելավել թափանցիկությունը և ԲՄԿ բացահայտումը**

Շարունակել ամրապնդել կենսակայության վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու և բացահայտումներ իրականացնելու շրջանակը, որակը և հետևողականությունը՝ ապահովելով համապատասխանություն միջազգային չափորոշիչներին և գործելակերպերին,

- **Խթանել ներքին կենսակայությունը և շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը**

Ընդլայնել ներքին բնապահպանական նախաձեռնությունները, աշխատակիցների իրազեկման ծրագրերը և շահագրգիռ կողմերին ներգրավվելու մեխանիզմները:



Բանկի կենսակայության ռազմավարության, կառավարման համակարգի, քաղաքականության, բացահայտումների և շահագրգիռ կողմերի ներգրավվածության մեխանիզմների մասին տեղեկություններ կարելի է գտնել Բանկի պաշտոնական կայքի «Կայուն զարգացում» [էջում](#):

Բանկը նաև վարում է հատուկ բնապահպանական և սոցիալական հարցերով բողոքների ներկայացման մեխանիզմ՝ հնարավորություն տալով գործընկերներին, մյուս կողմերին, ազդակիր համայնքներին և այլ շահագրգիռ անձանց վեր հանել Բանկի գործունեության կամ ֆինանսական նախագծերի հետ կապված բնապահպանական կամ սոցիալական մտահոգությունները: Ներկայացված բոլոր տեղեկությունները վերայանվում են ըստ հաստատված ներքին ընթացակարգերի՝ ապահովելով թափանցիկություն, հաշվետվողականություն և արձագանքման պատշաճ [մեխանիզմներ](#):

Նախաձեռնությունները աջակցում են կենսակայունությունը իր հիմնական բիզնես գործունեության մաս դարձնելու և կայուն ու պատասխանատու տնտեսական զարգացմանը նպաստելու Բանկի երկարաժամկետ նպատակին:

Որպես Հայաստանի խոշորագույն ֆինանսական հաստատություն՝ Բանկը շարունակում է հանձնառու լինել կայունության ինտեգրմանը իր կառավարման ռազմավարության և ռիսկեր կառավարման շրջանակում՝ նպաստելով երկարաժամկետ դիմակայունությանը և կայուն տնտեսական զարգացմանը: